ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
12.12.2011թ.
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 27

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ "ՏԻՄ" օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով ավագանին

ՈՐՈՇԵՑ – 1. Համայնքի բյուջեի 01.01.01.51 կառավարման մարմնի պահպանում ծրագրի 4239 հոդվածի 15.0 հազ. դրամ գումարը տեղափոխել նույն ծրագրի 4823 հոդվածին ծառայողական ավտոմեքենայի տեխ. զննման գումարը վճարելու համար:
2. Բյուջեի պահուստային ֆոնդից 1090.0 հազ. դրամ գումար տեղափոխել
ա/ 600.0 հազ.դրամը 01.01.01.52 վարչական օբյեկտների հիմնանորոգում ծրագրի 4251 հոդվածին գյուղապետարանի շենքի վերանորոգման համար,
բ/ 240.0 հազ. դրամ գումարը 4269 հատուկ նպատակային նյութեր հոդվածին՝ լուսամփոփներ և շերտավարագույրներ գնելու համար,
գ/ մնացած 250.0 հազ.դրամ գումարը տեղափոխել 10.03.01.51 հարազատին կորցրած անձանց ծրագրի 4726 հոդվածին:

Կողմ՝ Ալեքսանյան Վարուժան
Ալոյան Շողիկ
Նազարյան Գագիկ
Ներսիսյան Խաչատուր
Խաչատրյան Սահակ
Արշակյան Գեղամ
Աղախանյան Սեյրան
Հարությունյան Արթուր

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
12.12.2011թ.
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 29

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական տուրքերի և վճարների մասին" ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, ավագանին

ՈՐՈՇԵՑ

Ոստան համայնքի վարչական տարածքում 2012 թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների՝ ներառյալ ոչ հիմնական շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 10000 դրամ,

բ/ սույն կետի "ա" ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ,

բբ/ 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ,

բգ/ 1001 և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 17500 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/ մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 750 դրամ,

դ/ 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1250 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենքով սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված է ճարտարապետաշինարարական նախագծով,

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 750 դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման համար տեղական տուրքը սահմանվում է 1250 դրամ:

ա/ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3750 դրամ,

բ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3750 դրամ:

4. Համայնքի տարածքում բացօթյա վաճառքի կազմակերպման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ:

5. Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկներ, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար ընթացիկ տարվա համար՝ 150 000 դրամ:

6. Համայնքի տարածքում խաղատները, հանրային սննդի օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, զվարճանքի օբյեկտները ժամը 24-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա/ առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ,

բ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ,

գ/ խաղատների համար՝ 500 000 դրամ,

դ/ շահումներով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ,

ե/ բաղնիքների /սաունաների/ համար՝ 200 000 դրամ.

զ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ:

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 300 դրամ:

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու համար կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմիններին մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 500 դրամ:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցների վճար՝ 500 դրամ:

Կողմ՝ Ալեքսանյան Վարուժան
Ալոյան Շողիկ
Նազարյան Գագիկ
Ներսիսյան Խաչատուր
Խաչատրյան Սահակ
Արշակյան Գեղամ
Աղախանյան Սեյրան
Հարությունյան Արթուր

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
12.12.2011թ.
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 30

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ և 32-րդ հոդվածի 1-ին կետերով՝ ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել Ոստան համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների հետևյալ թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Համայնքային ծառայողներ՝

1. Աշխատակազմի քարտուղար	1 դրույք	125 000	դրամ
2. Գլխավոր մասնագետ	1 դրույք	105 000	դրամ
3. Առաջատար մասնագետ	1 դրույք	100 000	դրամ
4. Առաջատար մասնագետ	1 դրույք	100 000	դրամ
5. Առաջին կարգի մասնագետ	1 դրույք	77 000	դրամ
6. Երկրորդ կարգի մասնագետ	1 դրույք	73 000	դրամ

Պայմանագրային

7. Հարկահավաք	1 դրույք	77 000	դրամ
8. Գրադարանավար	1 դրույք	60 000	դրամ
9. Աղբահանության գծով կազմակերպիչ	1 դրույք	77 000	դրամ
10. Վարորդ	1 դրույք	55 000	դրամ
11. Պահակ	1 դրույք	45 000	դրամ
12, Պահակ	1 դրույք	45 000	դրամ
13. Հավաքարար	1 դրույք	40 000	դրամ
14. Ցրիչ	1 դրույք	45 000	դրամ:

Կողմ՝ Ալեքսանյան Վարուժան
Ալոյան Շողիկ
Նազարյան Գագիկ
Ներսիսյան Խաչատուր
Խաչատրյան Սահակ
Արշակյան Գեղամ
Աղախանյան Սեյրան
Հարությունյան Արթուր

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
12.12.2011թ.
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 31

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետով՝ ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել Ոստան համայնքի ղեկավարի աշխատավարձի դրույքաչափը՝ 155 000 /մեկ հարյուր հիսունհինգ հազար/ դրամ:

Կողմ՝ Ալեքսանյան Վարուժան
Ալոյան Շողիկ
Նազարյան Գագիկ
Ներսիսյան Խաչատուր
Խաչատրյան Սահակ
Արշակյան Գեղամ
Աղախանյան Մեյրան
Հարությունյան Արթուր

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
12.12.2011թ.
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 32

ՈՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ և 32-րդ հոդվածի 5-րդ կետերով՝ ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել գյուղի մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և դրույքաչափերը.

1. Տնօրեն	1 դրույք	75.0 հազ. դրամ
2. Դաստիարակ	1 դրույք	68.0 հազ. դրամ
3. Երաժիշտ	0.25 դրույք	16.0 հազ.դրամ
4. Հաշվապահ	0,5 դրույք	32.5 հազ.դրամ
5. Խոհարար	1 դրույք	45.0 հազ.դրամ
6. Դայակ	1 դրույք	45.0 հազ.դրամ
7. Պահակ	1 դրույք	32.5 հազ.դրամ:

Կողմ՝ Ալեքսանյան Վարուժան
Ալոյան Շողիկ
Նազարյան Գագիկ
Ներսիսյան Խաչատուր
Խաչատրյան Սահակ
Արշակյան Գեղամ
Աղախանյան Սեյրան
Հարությունյան Արթուր

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ